ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԳՊՀ գիտական խորհրդի
2025թ. փետրվարի 28-ի թիվ 9 նիստում
Ռեկտոր՝ Ռ. Հակոբյան

28.02.2025թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով կարգավորվում են Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) բակալավրիատի առկա և հեռակա բաժինների, մագիստրատուրայի կրթական ծրագրերում սովորող ուսանողների ուսման վարձը վճարելու, ուսանողներին նպաստի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում (զեղչ) տրամադրելու հետ կապված հարաբերությունները:
2. Ուսանողների ուսման վարձը կարող է փոխհատուցվել ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, Համալսարանի միջոցների, ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին՝ ընդունելության մրցույթի արդյունքների, ուսանողների սոցիալական վիճակի, բարձր առաջադիմության և հասարակական ակտիվության արդյունքների, այլ հանգամանքների հաշվառմամբ:
3. Վճարովի հիմունքներով Համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի առաջին կուրս ընդունված ուսանողների հետ Համալսարանը կնքում է պայմանագիր՝ նախատեսելով տարեկան ուսման վարձի չափը, վճարման պայմաններն ու կարգը:
4. Համալսարանի ուսանողներն ուսման վարձը վճարում են փոխանցման կարգով, Համալսարանին սպասարկող բանկում բացված հաշվարկային հաշվին:
5. Վճարային տերմինալների միջոցով վճարումներն արգելվում են, եթե վճարահաշվարկային կազմակերպությունը վճարման անդորրագրի վրա չի գրանցում և Համալսարանին փոխանցվող տեղեկատվության մեջ չի արձանագրում վճարումը կատարող անձի տվյալները, իսկ ‹‹Նպատակ›› տիրույթում չի նշում ուսանողի տվյալները՝ ազգանուն, անուն, հայրանունը, մասնագիտությունը, կուրսը և անհատական ծածկագիրը (կոդը):
6. Սոցիալական ծախսերի փոխհատուցման համար դուրս գրվող հաշիվ վավերագրերի մեջ ուսանողի տվյալներից զատ, ծնողների, ամուսնու կամ կնոջ, զավակի տվյալները ներառելու համար 2025թ. մարտի 11-ից նշված անձինք պետք է ուսման վարձի վճարումները կատարեն անձամբ՝ բանկային համակարգով:
7. Սույն կարգի 5-րդ և 6-րդ կետերի պահանջների խախտումով վճարումների կատարումը հիմք է սոցիալական ծախսերի փոխհատուցման համար

նախատեսված հաշիվ վավերագրերի դուրս գրումը մերժելու, ինչպես նաև վճարված գումարները ուսանողների անձնական հաշվին չհաշվեգրելու համար:

8. Սոցիալական ծախսերի փոխհատուցման համար էլեկտրոնային եղանակով հաշիվ վավերագիր դուրս գրելու համար ուսանողի կամ նրա ծնողի, ամուսնու կամ կնոջ, զավակի կողմից Համալսարան է ներկայացվում դիմում, եթե տվյալ պահի դրությամբ ուսման վարձավճարի գծով պարտավորություններ առկա չեն: Դիմումները ներկայացվում են ֆինանսական տարվա ավարտից հետո, եթե անձը նախորդ ֆինանսական տարին ներառող ուսումնական տարվա որևէ կիսամյակում ստացել է ամբողջական կրթական ծառայություններ՝ ավարտել է կիսամյակը կամ կուտակել է սահմանված անհրաժեշտ կրեդիտները:
9. Դիմումին կցվում են ուսանողի անձնագրի և հանրային ծառայությունների համարանիշի (ՀԾՀ) տրամադրման վերաբերյալ տեղեկանքի կամ նույնականացման քարտի լուսապատճենները, իսկ եթե

   1) սոցիալական ծախս կատարողը այլ անձ է, ապա նաև նշված անձի անձնագրի և ՀԾՀ-ի տրամադրման վերաբերյալ տեղեկանքի կամ նույնականացման քարտի լուսապատճենները,

   2)սոցիալական ծախս կատարողը և փոխհատուցում ստացողը ուսանողի ծնողներն են, ապա կցվում է ուսանողի ծննդյան վկայականի լուսապատճեն,

   3) սոցիալական ծախս կատարողը և փոխհատուցում ստացողը զավակն է, ապա կցվում է զավակի ծննդյան վկայականի լուսապատճեն,

   4) սոցիալական ծախս կատարողը և փոխհատուցում ստացողը ամուսինն է կամ կինը, ապա նրանց ամուսնության վկայականի լուսապատճեն:

   2025 թվականի և հետագա ֆինանսական տարիների համար հաշիվ վավերագրերի դուրսգրման համար դիմումին պետք է կցել նաև 2025 թվականի մարտի 11-ից հետո կատարված վճարումների լուսապատճենները:
10. Եթե ուսանողի ուսման վարձը վճարվել է բարերարների, հիմնադրամների կողմից, կամ փոխհատուցվել է ՀՀ պետական և/կամ համայնքային բյուջեների միջոցներից, ապա այդ վճարումների մասով չի կարող դուրս գրվել սոցիալական ծախսերի փոխհատուցման հաշիվ վավերագիր:
11. Հաշիվ վավերագիրը դուրս է գրվում կիսամյակի գումարի չափով կամ կուտակված անհրաժեշտ կրեդիտների գումարի չափով՝ գումարը բաշխելով սոցիալական ծախսեր կատարած անձանց միջև՝ կատարված վճարումներին համապատասխան:
12. Եթե ուսանողի ուսման վարձը Համալսարանի կողմից զեչվել է, ապա դուրս գրվող հաշիվ վավերագրում նշվում է զեղչի տոկոսը:
13. Համալսարանի բակալավրիատի առկա և հեռակա բաժիններում, ինչպես նաև մագիստրատուրայում վճարովի հիմունքներով սովորող ուսանողները սույն կարգի 4-րդ կետի համաձայն՝ ուսման վարձը կարող են վճարել իրենց ընտրությամբ, հետևյալ կարգով.

    1) ուսումնական տարվա համար միանվագ՝ տվյալ ուսումնական տարվա սկզբում կամ
    2) ուսումնական տարվա ընթացքում երկու անգամ՝ տվյալ ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակների սկզբում, կամ
    3) պարբերաբար՝ տվյալ ուսումնական տարվա ութ ուսումնական ամիսների ընթացքում: Ըստ ամիսների վճարելու դեպքում ուսման տարեկան վարձը հավասարաչափ բաժանվում է ուսումնական տարվա 8 ամիսներին և վճարվում

առկա բաժիններում՝ առաջին կիսամյակի համար սեպտեմբերից դեկտեմբեր՝ ներառյալ, և երկրորդ կիսամյակի համար փետրվարից մայիս՝ ներառյալ, իսկ հեռակա բաժիններում՝ առաջին կիսամյակի համար հոկտեմբերից հունվարը՝ ներառյալ, բացառությամբ առաջին կուրս ընդունվածների, որոնք վճարում են նոյեմբերից հունվարը՝ ներառյալ, և երկրորդ կիսամյակի համար՝ մարտից հունիս՝ ներառյալ: Ուսանողներն ամենամսյա վճարումները պարտավոր են կատարել առնվազն սահմանված ամսական վճարի չափով:

14. Ուսանողը սույն կարգի 13-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն ուսման վարձի պարբերաբար վճարումը պետք է կատարի մինչև յուրաքանչյուր ամսվա 15-ը՝ ներառյալ, իսկ կիսամյակի ուսման վարձը միանվագ վճարելու դեպքում՝ առկա բաժնում մինչև կիսամյակի առաջին ամսվա 15-ը, իսկ հեռակա բաժնում՝ դասերը սկսվելուց հետո 15 օրացուցային օրվա ընթացքում՝ բայց ոչ ուշ, քան միջանկյալ քննությունների սկիզբը:
15. Սույն կարգի 4-րդ, 13-րդ, 14-րդ կետերի համաձայն ուսման վարձի վճարումը սահմանված ժամկետներում չկատարելու դեպքում ուսանողի չվճարված ուսման վարձի նկատմամբ կարող է հաշվարկվել տույժ:
16. Տույժը հաշվարկվում է ֆակուլտետի խորհրդի որոշման համաձայն՝ ռեկտորի հրամանի հիման վրա, չվճարված գումարի նկատմամբ՝ տարեկան 48% դրույքաչափով:
17. Առկա բաժնում սովորող ուսանողների համար տույժերի հաշվարկը և հաշվեգրումը սկսվում է տվյալ կիսամյակի 4-րդ ամսվա 15-ից, իսկ հեռակա բաժնում՝ կիսամյակի դասերի ավարտից 1 օր առաջ:
18. Տույժերի հաշվարկումը դադարեցվում է ուսման վարձի գծով առկա պարտավորությունների ամբողջական մարումից հետո, կամ յուրաքանչյուր կիսամյակի չվճարված վարձի նկատմամբ տույժերի հաշվարկի 366-րդ օրը:
19. Ուսման վարձը չվճարելու դեպքում ուսանողները զրկվում են միջանկյալ քննություններին, քննաշրջանին, միջազգային ակադեմիական շարժունության ծրագրերին, պրակտիկաներին, ամփոփիչ ատեստավորմանը մասնակցելու իրավունքից:
20. Ուսանողի կողմից Համալսարանին կատարված վճարումներից նախ մարվում են հաշվեգրված և չվճարված տույժերը, որից հետո՝ ուսման վարձի գծով կուտակված պարտավորությունները:

II. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրամադրելու կարգն ու պայմանները

21. Պետության կողմից տրվող ուսանողական նպաստների (ուսման վարձի լրիվ փոխհատուցվող) քանակը տեղափոխվում է կուրսից կուրս:
22. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցում տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տեղերի քանակին համապատասխան՝

    1) մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով, ընդ որում.

ա. առաջին կուրսում նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցում տրամադրվում է պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերում ընդունված ուսանողներին,
բ. հաջորդ կուրսերում նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցում տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ մրցութային հիմունքներով: Սույն պարբերության պահանջները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նշած վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքած սովորողների վրա՝ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում,
գ. ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքում հավասար միավորներ ունեցող ուսանողների առկայության դեպքում երկրորդ կուրսում առավելությունը տրվում է առաջին կուրսի վերջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա, իսկ վերջինիս հավասարության դեպքում՝ դրան նախորդող ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին:
Թափուր տեղեր առաջանալու դեպքում նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցումը կարող է տրամադրվել տվյալ մասնագիտության շրջանակում այլ կրթական ծրագրերի ուսանողների՝ սույն պարբերությամբ սահմանված կարգով,
դ. սույն ենթակետի «բ» և «գ» պարբերությունների պահանջները տարածվում են նաև վճարովի համակարգում սովորող՝ Վրաստանի Սամցխե-Ջավախք ու Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված և բնակվող հայազգի, Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած հայազգի ուսանողների, ինչպես նաև հայազգի այն օտարերկրյա ուսանողների նկատմամբ, որոնց մշտական բնակության օտարերկրյա պետությունում ստեղծվել է քաղաքացիների կյանքին կամ առողջությանը սպառնացող արտակարգ իրավիճակ,
2) օրենքով նախատեսված հետևյալ սոցիալական խմբերին՝
ա. «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան անձանց,
բ. 1-ին, 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող և հաշմանդամ ճանաչված, ինչպես նաև ֆունկցիոնալության ծանր, խորը և միջին աստիճանի սահմանափակում ունեցող անձանց՝ համաձայն «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

գ. ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

դ. զոհված (մահացած) զինծառայողների ծնողներին, ամուսնուն (կնոջը), մինչև 27 տարեկան զավակներին՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

3) պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին:

23. Համալսարանի միջոցների հաշվին տվյալ ուսումնական տարում անվճար համակարգ ընդունված ուսանողների քանակի 10%-ի չափով տրամադրվում է ուսման վարձի լրիվ փոխհատուցում տվյալ ուստարում առավելագույն միավորներով վճարովի համակարգ ընդունված ուսանողներին:

Համալսարանի տրամադրած անվճար տեղերը հաջորդ ուսումնական տարիներին ենթակա են փոխատեղման:

24. Յուրաքանչյուր ուսումնական տարի Համալսարանի միջոցների հաշվին և պետության կողմից՝ ըստ Համալսարանի բակալավրիատի առկա բաժինների և մագիստրատուրայի մասնագիտություններին հատկացված անվճար տեղերի ուսման վարձի ամբողջովին փոխհատուցման ձևով ուսանողական նպաստների քանակն անփոփոխ է և տեղափոխվում է կուրսից կուրս:

25. Առաջադիմության ցուցանիշների հավասարության դեպքում փոխատեղման մրցույթն անցկացվում է նախորդ ուսումնական տարվա երկու կիսամյակների ընթացքում ուսանողների հանձնած քննություններից ստացած միավորների հաշվառմամբ: Վերջիններիս հավասարության դեպքում իր կարգավիճակը պահպանում է նախորդ ուսումնական տարում անվճար տեղում սովորած ուսանողը:

26. Փոխատեղման մրցույթին մասնակից ուսանողների ցուցակը ֆակուլտետի դեկանի կողմից ներկայացվում է ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի քննարկմանը: Մանդատային հանձնաժողովը, ըստ տվյալ մասնագիտության տվյալ կուրսին հատկացված անվճար տեղերի քանակի, իրականացնում է մրցույթ և կազմում մրցույթն անցած ուսանողների ցուցակը, որը վավերացվում է մանդատային հանձնաժողովի կողմից: Ցուցակի կազմման վերաբերյալ ընդունվում է արձանագրություն (2 օրինակից), որտեղ գրանցվում են մանդատային հանձնաժողովի անդամների կարծիքները և հնարավոր վերապահումները: Արձանագրությունը ստորագրվում է մանդատային հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից:

27. Ցուցակները և արձանագրությունները ֆակուլտետների դեկանների կողմից ներկայացվում են Համալսարանի մանդատային հանձնաժողովի քննարկմանը և հաստատմանը: Համալսարանի մանդատային հանձնաժողովի կողմից

հաստատված ցուցակները հրապարակվում են ֆակուլտետներում: Ցուցակների վերաբերյալ դիմում-բողոքները եռօրյա ժամկետում պետք է ներկայացվեն Համալսարանի մանդատային հանձնաժողովին: Հանձնաժողովը քննարկում է ներկայացված դիմում-բողոքները, հաստատում ուսման վարձի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների վերջնական ցուցակները և ներկայացնում Համալսարանի ռեկտորին՝ հրամանագրման: Ռեկտորի կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների հրամանագրումից հետո ուսանողների՝ այլ ուսումնական հաստատություն կամ այլ մասնագիտության փոխադրվելու, ինչպես նաև Համալսարանից ազատվելու կամ հեռացվելու դեպքերում ազատված ուսանողական նպաստները տվյալ ուսումնական տարում այլ ուսանողների չեն տրամադրվում, այլ ենթակա են լրացման հաջորդ ուսումնական տարվանից՝ սահմանված կարգի համաձայն կատարվող փոխատեղման մրցույթի արդյունքում:

28. Համալսարանի ռեկտորի հրամանում պարտադիր կարգով նշվում է ուսման վարձի փոխհատուցման տրամադրման ժամկետը, այն է՝ տվյալ տարվա սեպտեմբերից մինչև հաջորդ տարվա օգոստոսի 31-ը:
29. Փոխատեղման ցուցակներում անճշտություններ, վրիպումներ, սխալներ, ինչպես նաև ցուցակների կազմման ընթացակարգի խախտումներ հայտնաբերելիս՝ Համալսարանի մանդատային հանձնաժողովն իրավասու է տվյալ մասնագիտության ուսանողների ցուցակը վերադարձնել համապատասխան ֆակուլտետ՝ նոր մրցույթի կազմակերպման պահանջով: Սխալներ և ընթացակարգային խախտումներ թույլ տված անձինք ենթակա են կարգապահական տույժերի, որոնք տրվում են Համալսարանի ռեկտորի հրամանով:
30. Տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած, ապա վերականգնված, այլ բուհերից կամ Համալսարանի այլ մասնագիտություններից տեղափոխված ուսանողները նպաստներից կարող են օգտվել տվյալ մասնագիտությամբ մեկ ուսումնական տարի սովորելուց հետո:

III. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում տրամադրելու կարգն ու պայմանները

31. Պետությունն՝ ըստ առաջադիմության, ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում տրամադրում է՝
    1) Լեռնային Ղարաբաղից 2023 թ. սեպտեմբերի 19-ից հետո բռնի տեղահանված ընտանիքների անդամ-ուսանողներին,
    2) ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ընտանիքների անդամ-ուսանողներին՝ սույն կարգի 32-րդ և 33-րդ կետերին համապատասխան,

3) սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի բնակիչ ուսանողներին՝ սույն կարգի 34-րդ և 35-րդ կետերին համապատասխան,

4) մարտական գործողություններին մասնակցած ուսանողներին՝ սույն կարգի 35-րդ կետին համապատասխան,

5) առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրերով սովորող՝ երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողներին՝ սույն կարգի 35-րդ կետին համապատասխան:

32. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում տրամադրվում է ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ամեն տարի սահմանվող ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ընտանիքների ուսանողների հետևյալ խմբերին՝

ա) մինչև 5,00 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 50 տոկոսի չափով,

բ) 5,01-10,00 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 60 տոկոսի չափով,

գ) 10,01-15,00 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 70 տոկոսի չափով,

դ) 15,01-20,00 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 80 տոկոսի չափով,

ե) 20,01-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 90 տոկոսի չափով:

33. Սույն կարգի 32-րդ կետով նախատեսված փոխհատուցումը տրամադրվում է՝

1) բակալավրի կրթական ծրագրերով կրթական աստիճանում՝

ա. առաջին կուրսում՝ համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրի) համար սահմանված ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա,

բ. հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա արդյունքներով միջին որակական գնահատականի (այսուհետ՝ ՄՈԳ) առավելագույն արժեքի առնվազն 60 տոկոսի շեմը հաղթահարելու դեպքում.

2) մագիստրոսի կրթական աստիճանում՝ առաջին կուրսում նախորդ կրթական աստիճանի ՄՈԳ-ի 60 տոկոսի, իսկ հաջորդ կուրսերում ՄՈԳ-ի առավելագույն արժեքի առնվազն 70 տոկոսի շեմն ապահովելու դեպքում:

34. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածում ներառված սոցիալական աջակցություն ստացող համայնքների բնակավայրերում հաշվառված և վերջին հինգ տարում (այդ թվում՝ ընդհանուր հանրագումարով) մշտապես բնակվող ու տվյալ համայնքներից որևէ մեկի

հանրակրթական (միջնակարգ կամ ավագ դպրոց), նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններն ավարտած ուսանողներին:

35. Սույն կարգի 31-րդ կետի 3-5-րդ ենթակետերով սահմանված ուսանողների խմբերին փոխհատուցում տրամադրվում է՝

1) առաջին կուրս ընդունված ուսանողներին՝

ա. բակալավրի կրթական ծրագրերով՝ համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրի) համար սահմանված ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա՝ տարեկան ուսման վարձի 50 տոկոսի չափով,

բ. մագիստրոսի կրթական աստիճանի դեպքում՝ նախորդ կրթական աստիճանի ՄՈԳ-ի 60 տոկոսը հաղթահարած ուսանողներին՝ տարեկան ուսման վարձի 50 տոկոսի չափով.

2) հաջորդ կուրսերում՝

ա. նախորդ ուսումնական տարվա արդյունքներով ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 60,00-70,99 տոկոս ունեցող ուսանողներին՝ տարեկան ուսման վարձի 50 տոկոսի չափով,

բ. նախորդ ուսումնական տարվա արդյունքներով ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 71,00-79,99 տոկոս ունեցող ուսանողներին՝ տարեկան ուսման վարձի 60 տոկոսի չափով,

գ. նախորդ ուսումնական տարվա արդյունքներով ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 80,00 տոկոս և բարձր ՄՈԳ ունեցող ուսանողներին՝ տարեկան ուսման վարձի 70 տոկոսի չափով:

36. Սույն կարգի 22-րդ կետի 2-րդ և 31-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված կարգավիճակները՝

1) ուսումնական տարվա ընթացքում (բացառության տվյալ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում) ձեռք բերելու դեպքում ուսանողական նպաստը ուսանողին տրամադրվում է տվյալ ուսումնական տարվա համար՝ սույն կարգի 32-րդ, 33-րդ և 35-րդ կետերով սահմանված չափերին համապատասխան:

2) ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում ձեռք բերելու դեպքում ուսանողական նպաստը ուսանողին տրամադրվում է տվյալ կիսամյակի համար՝ սույն կարգի 32-րդ, 33-րդ և 35-րդ կետերով սահմանված տոկոսներին համապատասխան:

3) Սույն կարգի 22-րդ կետի 2-րդ և 31-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերով սահմանված ուսանողների խմբերին ուսումնառության ընթացքում համապատասխան կարգավիճակը կորցնելու դեպքում ուսանողական նպաստի փոխհատուցում չի տրվում ուսումնական հաջորդ տարվանից:

37. Պետության, ինչպես նաև Համալսարանի կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցման մասին դիմումներն ընդունվում են՝

1) առկա (նաև՝ առցանց) ուսուցման դեպքում՝ տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին հաջորդող չորս շաբաթների ընթացքում.

2) հեռակա բաժիններում (նաև՝ առցանց)՝ տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին նախորդող և հաջորդող մեկական շաբաթների ընթացքում:

3) Սույն կարգի 31-րդ կետի 2-5-րդ ենթակետերով սահմանված կարգավիճակները 37-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված ժամկետներից հետո ձեռք բերելու դեպքում՝ համապատասխան կարգավիճակը ձեռք բերելու ուսումնական տարում ուսման վճարի փոխհատուցում ստանալու մասին դիմումներն ընդունվում են հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում՝ 37-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված ժամկետներում՝ նախորդ ուսումնական տարում համապատասխան կարգավիճակը հավաստող փաստաթղթի առկայության դեպքում:

38. Համալսարանը մինչև տվյալ տարվա նոյեմբերի 10-ը, իսկ երկրորդ կիսամյակի համար մինչև ապրիլի 10-ը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե (որպես բյուջետային հատկացումների կարգադրիչ հանդիսացող մարմին) է ներկայացնում սույն կարգի 22-րդ կետի 2-րդ ենթակետով, 31-րդ կետի 2-5-րդ ենթակետերով և 32-րդ կետերով սահմանված ուսանողների խմբերի վերաբերյալ տվյալները՝ համապատասխան ֆինանսական միջոցներ ստանալու համար:

39. Սույն կարգի 31-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված կարգավիճակը ունեցող ուսանողները պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի կամ լրիվ փոխհատուցում ստանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի 1762-Լ և 2023 թվականի դեկտեմբերի 21-ի N 2291-Լ որոշումներով հաստատված կարգերով:

40. Համալսարանում մեկից ավելի մասնագիտություններով (կրթական ծրագրերով) նույն կրթական աստիճանով զուգահեռ ուսանելու դեպքում ուսանողին պետության կողմից նպաստի ձևով լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրվում է մեկ մասնագիտության (կրթական ծրագրի) համար:

41. Համալսարանի միջոցների հաշվին ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում կարող է տրվել՝ բակալավրիատում ՄՈԳ-ի 80%-ի չափը և մագիստրատուրայում՝ ՄՈԳ-ի 90%-ի չափը հաղթահարած այն ուսանողները, ովքեր ունեն հետևյալ կարգավիճակները.

1) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների անդամ) ուսանողներին՝ առնվազն 20 տոկոս.

2) 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին մինչև 23 տարին լրանալը՝ առնվազն 50 տոկոս.

3) 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին՝ առնվազն 50 տոկոս.

4) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ առնվազն 50 տոկոս.

5) երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների անդամ-ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.

6) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.

7) մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.

8) Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների երեխա-ուսանողներին կամ ընտանիքների անդամ-ուսանողներին, ովքեր ուսման վարձավճարի փոխհատուցում չեն ստանում պետական բյուջեի միջոցների հաշվին՝ առնվազն 30 տոկոս.

9) Համալսարանի աշխատակիցների երեխա-ուսանողներին, ինչպես նաև աշխատակիցների ընտանիքների անդամ-ուսանողներին՝ առնվազն 20 տոկոս:

42. Բացառիկ դեպքերում Համալսարանի միջոցների հաշվին ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում կարող է տրվել սույն կարգի 41-րդ կետում սահմանված ՄՈԳ-ի շեմը չհաղթահարած ուսանողներին, ինչպես նաև 41-րդ կետում նախատեսված կարգավիճակ չունեցող սովորողներին:

43. Համալսարանից հեռացված, ազատված և ուսման վարձի պարտք ունեցող նախկին ուսանողների ուսման վարձի պարտքը բացառիկ դեպքերում կարող է ամբողջությամբ կամ մասամբ զիջվել՝ Համալսարանի ռեկտորի հրամանով:

44. Համալսարանի միջոցների հաշվին ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման անհրաժեշտությունը որոշելու նպատակով կարող է կազմակերպվել տնայցելություն: Տնայցելություն կատարած հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում տրամադրվում է փոխհատուցում, իսկ բացասական եզրակացության դեպքում ուսանողների դիմումները մերժվում են: Տնայցելություն կատարելու նպատակով հանձնաժողովը ձևավորվում է ռեկտորի հրամանով:

45. Սույն կարգով սահմանված ուսման վարձի մասնակի փոխհատուցման մի քանի հիմքերով հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է ուսման վարձի մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:

46. ՀՀ պետական բյուջեից, համայնքային բյուջեներից, հովանավոր կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից, ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից տարեկան ուսման վարձի լրիվ փոխհատուցում ստացած ուսանողները չեն կարող ստանալ Համալսարանի միջոցների հաշվին ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում, իսկ վերը նշված անձանցից տարեկան ուսման վարձի մասնակի փոխհատուցում ստացած ուսանողները կարող են Համալսարանի միջոցների հաշվին ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում ստանալ բացառիկ դեպքերում՝ տարեկան ուսման վարձի մնացորդի առավելագույնը 20%-ի չափով, բացառությամբ Համալսարանի աշխատակիցների ընտանիքների անդամ-ուսանողների, որոնք ընդհանուր հիմունքներով՝ սույն կարգի 41-րդ կետի

համաձայն կարող են ստանալ տարեկան ուսման վարձի փոխհատուցում առավելագույնը տվյալ ուսումնական տարվա ուսման վարձի մնացորդի չափով:

47. Տարբեր կազմակերպություններից և հովանավոր անձանցից տարեկան ուսման վարձի փոխհատուցում ստացած ուսանողները չեն կարող հետ ստանալ ավել վճարված գումարները: Ավել վճարված գումարները կարող են ուսանողի դիմումի հիման վրա փոխանցվել իրենց ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին կամ Համալսարանի սոցիալապես անապահով այլ ուսանողի: Ավել վճարված գումարը այլ ուսանողի չփոխանցվելու դեպքում համարվում է նվիրատվության ֆոնդ և կարող է Համալսարանի ֆակուլտետների խորհուրդների որոշմամբ տրամադրվել սոցիալապես անապահով ուսանողների՝ որպես ուսման վարձավճար:

48. Ուսանողները ուսման վարձի փոխհատուցման դիմումներին կից ներկայացնում են համապատասխան տարակարգերին պատկանելու (կարգավիճակ ունենալու) մասին փաստաթղթերը (միասնական սոցիալական ծառայության, բժշկական հանձնաժողովի, զինվորական կոմիսարիատի, իրավասու մարմնի և այլ տեղեկանքներ), ՄՈԳ-ի սահմանված շեմը հաղթահարելու մասին համապատասխան ֆակուլտետի դեկանի զեկուցագիրը, ուսանողական խորհրդի միջնորդությունը, այլ հիմնավորող փաստաթղթեր:

49. Նպաստառու ուսանողի սոցիալական վիճակի փոփոխության դեպքում Համալսարանի կողմից տրամադրվող ուսանողական նպաստը կարող է փոփոխվել:

50. Մինչ ուսումնական տարվա առաջին կամ երկրորդ կիսամյակի սկիզբը ուսման վարձը վճարած, դասերին չմասնակցած և Համալսարանից ազատման մասին դիմում ներկայացրած անձի ուսման վարձը ենթակա է հետ վերադարձման՝ վճարած գումարի 10%-ի պահումով:

51. Ուսանողական իրավունքները վերականգնած և ակադեմիական տարբերություններով ու առարկայական պարտքերով պայմանավորված՝ ուսումնական տարին կրկնող ուսանողները վճարում են ուսման վարձ՝ Համալսարանի հետ կնքված նոր պայմանագրով սահմանված չափով ու կարգով:

52. Համալսարանի մի ֆակուլտետից (բաժնից, մասնագիտությունից) մյուսը, այլ բուհերից Համալսարան տեղափոխվելու, երկրորդ մասնագիտություն ստանալու, շարունակական կրթության կարգով միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները ավարտելուց հետո Համալսարանում ուսումը շարունակելու մասին դիմումներ ներկայացրած, ինչպես նաև հեռացված, տարկետում ստացած, ապա վերականգնված անձինք, բացառությամբ զինծառայության հիմքով տարկետում ստացածների, առարկայական տարբերությունների կամ քննաշրջանի հանձնման, ամփոփիչ ատեստավորման, այլ ակադեմիական առաջադրանքների կատարման գործընթացը կազմակերպելու համար Համալսարանին նախապես վճարում են համապատասխան կրեդիտների արժեքի չափով՝ ըստ իրենց ընտրած մասնագիտության համար տվյալ ուսումնական

տարում սահմանված տարեկան ուսման վարձի, որը չի վերադարձվում, եթե անձն իր նախաձեռնությամբ առարկայական տարբերությունները չի հանձնել, այլ ակադեմիական առաջադրանքները չի կատարել և չի հրամանագրվել:

Մեկ կրեդիտի արժեքը որոշվում է ուսման տարեկան վարձի և ուսումնական տարվա ընդհանուր կրեդիտների հարաբերությամբ, սակայն առարկայական տարբերությունների հանձնման պարագայում կրեդիտների քանակը հաշվարկվում է 0.5 գործակցով՝ հաշվի առնելով բազմագործոն գնահատման համակարգում եզրափակիչ ստուգմանը տրվող հարաբերական կշիռը:

53. Համալսարանից հեռացված կամ ազատված անձանց կողմից մինչ այդ վճարված ուսման վարձը, բացառությամբ կանխավճարների, վերականգնվելիս չի վերադարձվում, իսկ բացառիկ դեպքերում, հիմք ընդունելով ուսանողի կարգավիճակը, համաձայն սույն կարգի 31-րդ և 41-րդ կետերի՝ կարող է հաշվի առնվել:

54. Համալսարանի մի ֆակուլտետից, բաժնից, մասնագիտությունից մյուսը տեղափոխվող, ինչպես նաև Համալսարանից հեռացված, ազատված կամ տարկետում ստացած (բացառությամբ զինծառայության հիմքով տարկետում ստացածների) անձանց ուսանողական իրավունքները վերականգելիս, այդ թվում՝ նախկինում ժամանակավոր կցագրված կամ ընդունված և զինվորական ծառայության հիմքով տարկետում ստացած, բայց տարկետում ստանալու ուսումնական տարվա ընթացքում առնվազը մեկ կիսամյակի ուսման վարձը ամբողջովին չվճարած ուսանողների հետ սահմանված կարգով կնքվում է նոր պայմանագիր՝ նախատեսելով տվյալ ուսումնական տարվա համար սահմանված ուսման վարձավճարի չափը: